

Այս համարում

Հայերեն բաժին

- | | |
|------------------------------------|----|
| 1- Հայաստան 16..... | 1 |
| 2- Լուրեր - Իրանահայ համայնք | 2 |
| 3- Լուրեր - Հայաստան | 5 |
| 4- Հասարակական..... | 6 |
| 5- Մարզական..... | 9 |
| 6- Մշակութային..... | 10 |

Հրաչյա Աճառյանը Պարսկաստան(4)...10

Հայ իին գրականություն(3)..10

Շնորհավորում Ենք Հայաստանի Հանրապետության անկախության տոնը

16



Պարսկերեն բաժին

- | | |
|------------------------------------|---|
| 1- Լուրեր - Իրանահայ համայնք..... | 1 |
| 2- Լուրեր - Իրան, Հայաստան..... | 1 |
| 3- Մարկո Գրիգորյանի հիշատակին..... | 2 |

Շապիկի առաջին էջում՝

Սասունցի Դավիթ -Երեւան

Շապիկի վերջին էջում՝

Հայկականք

Համար 136, Սեպտեմբեր, 2007թ.

No. 136, September 2007

ماهnamه لویس - شماره ۱۳۶ شهریور ماه ۱۳۸۶

1991 թվականի սեպտեմբերին հայ ժողովուրդը միահանուր կերպով՝ այս ասաց անկախության հանրաքվեին և արդեն 16 տարի է Հայաստանի երրորդ հանրապետությունը սեպտեմբերի 21-ին՝ աշխարհով ցրված հայության հետ համատեղ տոնում է իր անկախությունը, որի կերտման ճանապարհին անցավ բազմաթիվ փորձությունների և դժվարությունների միջով և ունեցավ ակնհայտ ծեռքբերումներ: Ամենամեծ ծեռքբերումը խաղաղությունն ու կայունությունն է, որի համար պարտական ենք առաջին հերթին ՀՀ զինված ուժերին, որոնց շնորհիվ պաշտպանված են հայրենիքի սահմանները և որը հիմք է ստեղծում երկրի ներքին զարգացման համար: Գնալով էլ ավելի է բարելավվուն կյանքի մակարդակը, միասնական աջակցություն է ցուցաբերվում ՀՀ հանրապետությանը, որն այսօր կայացված է և խաղաղ պայմաններում անցկացրել է նախագահական ընտրություններ: Ամենօրյա աշխատանք է տարվում Հայոց Մեծ եղեռնի ճանաչման և դատապարտման գործում:

Անկախության տոնի առթիվ «Լույս» ամսագիրը շնորհավորում է ողջ հայությանը և հույս հայտնում, որ իրանահայերս էլ, ինչպես միշտ մեր ջանքները կը միավորենք ազգային նպատակների իրագործման և հայրենիքի ու հայ ազգի բարօրրության համար:

Լուրեր

Իրանահայ Համայնք

Ողջունելի քայլ «Րաֆֆի»-ի և «Սիփանի» վարչությունների հանդիպում

2007 թվականի սեպտեմբերի 4-ին ՀՍՍ «Սիփան» Միության կենտրոնատեղիում Սասուն քաղաքականախ երկու հեղինակավոր հայկական կենտրոնների «Սիփան» միության և «Րաֆֆի» համալիրի վարչությունները հանդիպեցին ու ունեցան մտերմիկ գորուց: Նախ երկու կողմերի տարրեր բաժանմունքների վարչության կապերը ներկայացրին իրենց բաժանմունքները: Ապա խոսվեց, թե ինչ հանգործակցության եզրեր գոյություն ունեն նրանց միջև: Արտահայտվեց այն կարծիքը, որ Սասուն քաղաքամասը ամենահայահոն քաղերից է և պետք է ավելի շատ ուշադրության արժանանա ազգային իշխանության կողմից, համոզմումը հայտնեցին երկու կողմերն, որ երենն այդ պահանջների շուրջ պետք է միասնական համեստ գալ՝ թեմական խորհրդի, Պատգամավորական ժողովի և այլ ազգային կառույցների առջև: «Րաֆֆի»-ի վարչության անդամները մտահոգություն արտահայտեցին այն կապակցությամբ, որ, դժբախտաբար, վերջերս ազգային իշխանության մի շարք դեկավարներ արտահայտել են ին և 25 տարի առաջվա դիրքորոշումները, որոնք բիում են մենատիրության և միասնական աշխատանքի ու միասնականության սահմանումը չճանաչելու հետևանքով, նրանք տեղեկացրին, որ այս կապակցությամբ տեղյակ է պահվել ՀՀ Դաշնակցության դեկավարությանը, որ այդ մասին արտահայտի իր կարծիքը, բայց, դժբախտաբար, քար լուրդուն է տիրում և կարծես թե կուսակցությունը նույնիսկ դժվարանում է այս հարցին մոտենալուց ու դիրքորոշումից:

Երկու վարչությունները շեշտեցին, որ անհրաժեշտ է իրենց միությունների տարրեր բաժանմունքներ միմյանց հետ հանդիպեն և գորույններ ունենան, որը կնպաստի նրանց խորհրդանական նվազեցման ու վերացմանը:

Առաջարկվեց, որ վարչությունների նախագահները միմյանց հետ կապի մեջ լինեն ու նման հանդիպումների ու համագործակցությունների մեխանիզմները ծառակ: Հույսով ենք նման հանդիպումները նպաստեն մեր համայնքի ներքին կյանքին, ժողովրդավարության ու բոլոր միությունների ինքնուրույնությանը:

Պատգամավորական ժողովի 40-րդ նիստը

2007 թվականի օգոստոսի 14-ին ազգային առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ Թեհրանի Հայոց Թեմի պատգամավորական ժողովի 40-րդ նիստը: Նիստին ներկա էին 57 հոգուց՝ 31-ը՝ Բացակայության պատճառը արձակուրդներն ու, մի գուցե, նիստերի անհետաքրքիր լինելու է:

Նիստին ներկա էին նորընտիր Թեմական խորհրդի և հաշվերնիշ մարմինների անդամները: Սա առաջին հանդիպումն էր, որ նրանք ունենում էին

Պատգամավորական ժողովի հետ: Նիստին ներկա էր նաև Կիլիկիո կաթողիկոսության ազգային ժողովի վարչության անդամ դկտ. Յարմիկ Դավթյանը:

Նիստից առաջ ՊԺ-ի դիվանը անդամներին էր տրամադրել կրոնական և ՊԺ-ի ենթակա մարմինների թեկնածուների անվանացանկը: Նիստի սկզբում ավագ քահանա Տեր Վարագիանը ներկայացրեց կրոնական խորհրդի հանձնախնդերի անդամների անունները և որոշ բացատրություններ տվեց: Նա խոսեց «Քրիստոնեության դաստիարակության հանձնախումբ»-ի մասին, այս հանձնախումբը մի շարք աշխատանքներ է տարել, օրինակ մի շարք հրատարակչական աշխատանքներ, հանդիպումներ և կրոնական ձեռնարկներ է կազմակերպել, օրինակ՝ կրոնական գրքերի ցուցահանդես և այլն: Կա նաև «Երիտասարդների հանձնախումբ», որը ստեղծվել է Կիլիկիո կաթողիկոսության թելարդանքով, այս հանձնախումբը պետք է մեր երիտասարդներին հնարավոր չափով մոտեցնի եկեղեցուն, որովհետև, ըստ քահանահայրի՝ Երիտասարդները հեռացած են եկեղեցուց, Երիտասարդներին պետք է գիտել կրոնական և հոգևոր տեղեկություններով, որպեսզի աղանդավորները չկարողանան նրանց շեղեն ու իրենց կողմը քաշեն: Այս հանձնախումբը կազմակերպում և հսկում է նաև կիրակօրյա աշխատանքները:

Նորընտիր Թեմ-ի նախագահ դոկտ. Այիդա Շովհանիսյանը հարցուեց, թե արդյոք մարմինների թեկնածուների անունները տրվում է ՊԺ-ին հաստատման կամ տեղեկացման համար: ՊԺ-ի դիվանի փոխատենապետ պրո. Ռուբիկ Կարապետյանը ասաց, որ-«Ըստ մեր կանոնադրության՝ հաստատման համար, բայց կրոնական խորհրդի համար դա չի կիրառվում»:

Կրոնական խորհրդի կողմից նշվեց, թե մտածում են, որ նոր մեթոդներով ու եղանակներով են ուզում աշխատել, բայց երբ հարց տրվեց, թե որոնք են այդ նոր եղանակները՝ որևէ բավարար պատասխան չստացվեց և կարծեն թե կրոնական խորհրդող համոզված է, որ կրոնական դաստիարակության նոր եղանակներ են պետք, բայց ինքն էլ դեռ լրիվ պատկերացում դրանց մասին չունի:

Հաջորդ բաժնում Թեմ-ի կողմից դկտ. Այիդա Շովհանիսյանը ասաց-«Մենք ունենք 19 մարմին, որոնցից 7-ը եկեղեցական խորհրդություններն են, 16-ի անվանացանկը ներկայացված է, սակայն մշակութային, կրթական և հարաբերական մարմինների ցանկերը հետագայում պետք է ներկայացվի: Մշակութային մարմինը դեռ հայտնի չէ՝ լինի, թե չլինի, այսինքն՝ հայտնի չէ դրա անհրաժեշտությունը կա, թե՝ չկա. հրավիրվել է առաջին խորհրդակցական ժողով և շուտով տեղի կունենա երկրորդ ժողովը և այդ ժողովների եզրակացությունը պետք է ներկայացվի Թեմ-ին, որպեսզի կողմնորոշվենք՝ կյանքի կոչել այդ մարմինը, թե՝ ոչ: Հանրային կապը նախկինում դժվարություն է ունեցել աշխատելու որպես մարմին, նենք կարծում ենք պետք է ունենալ պաշտոնական գրասենյակ և լուրջ աշխատանք տանել, ինարավոր է հանրային կապի կողքին կյանքի կոչվի հարաբերական մարմին, բայց խորհրդատվական դեր է ունենալու նա: Կրթական մարմնի շուրջ երկար խոսակցություն է գնացել մեր ժողովներում, տարրեր անձնավորությունների հետ է խոսվել, բայց հնարավոր չի եղել վերջնական եզրակացության գալ: Այս տարվա կրթական խորհրդողը այս տարվա համար ծրագրավորումները արել է և աշխատանքը կանգ չի առնում, ՊԺ-ից մի քիչ ժամանակ ենք ուզում, որ հարցը

ԼՈՒՅՍ # 136 Սեպտեմբեր 2007թ. էջ 2

լութենք: Մտածում ենք նոր կրթական խորհուրդը կյանքի կոչելուց հետո, նոր և հին խորհուրդների նիստ ունենանք և նրանք իրենց փորձառությունները միմյանց փոխանցեն:

Թեմական խորհրդի ենթամարմինների համար մեզ ներկայացել կամ ներկայացրել են 19 հոգի, որոնցից 11 հոգի ներառվել են տարբեր մարմիններում, սակայն 8 հոգի չեն ներառվել, որովհետև նրանք ցանկանում էին ներառվել մշակութային, կրթական կամ հարաբերական մարմիններում:

Եղան մի շարք հարցեր, որոնց պատասխանեց նորընտիր Թիս-ի նախագահ՝ դկտ. Այհով Շովիանիսյանը: Այդ հարցերից ու պատասխաններից կարելի է նշել հետևյալները՝ 1- Հարց. Դուք միությունների ներկայացուցիչների հետ հանդիպում եք դրեւ, արդյո՞ք մշակութային մարմինը միությունների ներկայացուցիչներից են լինելու: Պատ. Միություններից հրավիրված են եղել ժողովի միայն նրանց կարծիքը իմանալու համար: 2- Հարց.-Դետք է պարզ լինի թե ովքեր են կրթական մարմնի թեկնածուները և ինչ ծրագրեր ունեն, կարծես կամ նարդիկ, բայց չունեն միասին աշխատելու ցանկություն: Պատ.- Կրթական մարմինը ծանր պարտականություն ունի և բավական ժամ է պահանջուն, դժվար է գտնել նարդիկ, որ պատրաստ լինեն կամ հնարավորություն ունենան ժամ հատկացնելու: Կան ցանկեր, բայց դեռ վերջնական պատասխան չեն տվել: 3- Հարց.- Հարաբերական մարմինը արդյոք խոսնյակն է լինելու Թիս-ի և ինչ պայմաններ եք նախատեսում նրա համար: Պատ.- Ամենալավագույնին ենք ընտրելու, որ ծանոթ լինի մեր կառուցվածքին և աշխատանքներին: 4- Հարց.- Նշվեց, որ աշխատել եք երիտասարդներից օգտվել, բայց Զեր ներկայացրած ցանկերում ավելի հին ու տարիքով մարդիկ կան: Պատ. Դա չի երևում ցանկերում, բայց կան երիտասարդներ: 5- Հարց.- Մշակութային մարմինը դեռ բանաձևած չէ, թե ինչ է նրա պարտականությունը և արդյո՞ք դա չէ պատճառը, որ դժվարանում եք ընտրություն կատարել: Պատ.- Մենք դեռ չգիտենք դրա անհրաժեշտությունը կա, թե՝ ոչ:

Այնուհետև դկտ. Այհով Շովիանիսյանը սկսեց ընթերցել տարբեր մարմինների անվանացակերը:

Ճնորհավորանը

«Լույս»-ի աշխատակազմը սրտանց շնորհավորում է ամսագրի տնօրեն՝ **դկտ. Ռուբիկ Սարգսյանին՝** Թեհրանում պետական սոց. ապահովության (Թամին Եջենայի) կազմակերպության կողմից տարվա օրինակնի բժիշկ ճանաչվելու կապակցությամբ:

Ամենալավ մաղթանքներով ցանկանում ենք նրան էլ ավելի ուժ ու կորով իր աշխատանքում, անձնական և հասարակական կյանքում:

Կազմակերպությունը սկսելու հետինական մասնակիոր և կազմակերպություն վայելող կազմակերպությունն է, որը ունի իր պաշտոնաթերթը՝ «Շայկի Սերունդ» վերնագրով և որը համարվում է Արցախի երիտասարդների ամսագիր:

Ավելի քան երկու տարի է, որ կազմակերպությունը կապի մեջ է Թեհրանի որոշ միությունների երիտասարդական և սկաուտական բաժանմունքների հետ: Այս անգամ այցի նպատակն է՝ ավելի շատ ծանրութանալ Թեհրանում տարվող հայկական սկաուտական և երիտասարդական աշխատանքներին:

Դենց առաջին օրը նրանք այցելեցին ազգային առաջնորդարան, որտեղ ցերոնրեն նրանց ընդունեց համայնքի առաջնորդ Տ. Սեպուհ Արք. Սարգսյանը: Շանդիպման ընթացքում նրանք տեղեկություններ փոխանցեցին իրենց կազմակերպության և Արցախի մասին և փոխադարձաբար Առաջնորդը ծանրացրեց Թեհրանի Շայոց թեմի դրվագին և վերջում մեծ քանակությամբ հոգևոր գրքեր նվիրեց նրանց, որպեսզի օգտագործեն Արցախում:



Թեհրանի «Միասնական համադրող հանձնախումբ», կազմակերպելով մտերմիկ հանդիպում, իր բարի գալուստի խոսքը ասաց մեր հյուրերին: Հանձնախմբի նախագահ պր. Շարութ Քեշիշյանը համառոտ ծնով ներկայացրեց հանձնախմբին և խոսեց տարած աշխատանքների ու նպատակների մասին:

Նրանք երկու անգամ հյուրընկալվեցին ՀՍՍ «Րաֆֆի» համալիրի սկաուտական բաժանմունքի կողմից և ավելի մանրամասն ծանրանալով սկաուտական պարբերական աշխատանքների հետ՝ ունեցան երկխոսություններ ու խորհրդատվական հանդիպումներ համալիրի սկաուտական պատասխանատունների հետ:

Մեկ անգամ հանդիպում ունեցան ՀՍՍ «Սիփան» միության սկաուտապետի և վարչության անդամների հետ: Այս հանդիպմանը «Շայկի Սերունդ» կազմակերպությունը «Սիփան» միության սկաուտներից ընտրյալ մի խմբի հրավիրեց մասնակցելու 2008 թվականի օգոստոսին Արցախում կայանալիք համահայկական «Շայորդիներ»-ի սկաուտական ճամբարին: Այդ ճամբարին նախատեսվում է, որ

Արցախի «Շայկի Սերունդ»-ը Թեհրանում

2007 թվականի օգոստոսի 15-ին Թեհրանի «Միասնական համադրող հանձնախումբ»-ի հրավերով Թեհրան ժամանեցին Արցախի «Շայկի Սերունդ» հասարակական երիտասարդական ոչ պետական կազմակերպության վարչության հինգ անդամներ: Այս

Թեհրանի բոլոր այն միություններից, որ սկաուտական բաժանմունք ունեն՝ մեկական խումբ հրավիրվի Արցախ:

Նրանք մասնակցեցին նաև Յայ Բարեգործական Ընդհանուր Միության սկաուտական բաժանմունքի պարբերական աշխատանքին: Ծանոթանալով նրանց աշխատանքին՝ ունեցան մտերմիկ զրույց հատկապես սկաուտապետ պրո. Էղմոնդի հետ: Բարեգործականը նույնպես հրավիրվեց մեկ խճբակով մասնակցելու համահայկական սկաուտական ճամբարին:

Նրանք ցանկություն ունեին այցելել նաև «Արարատ» կազմակերպության սկաուտական բաժանմունք, սակայն սկաուտների պատասխանատուները չկարողացան իրենք որոշում տալ և պահանջեցին մի նամակ հղվի «Արարատ»-ի վարչությանը, որը կորվի ժողովի և, եթե համաձայնվեն, այն ժամանակ կարող են այցելել սկաուտներին, սակայն դժբախտաբար դրա ժամանակն չկար և վագ անցան այդ այցելությունից:

Անցյալ տարի «Յայկի Սերունդը» Արցախում հյուրնեկալել էր Թեհրանի հայ համալսարանական միության վարչության անդամներին: Եվ տեղեկանալով նրանց այցի մասին Յանալսարանական միությունը նրանց պատվին կազմակերպեց ընթրիքի երեկո «Արարատ» կազմակերպությունում:

Նրանք այցելեցին «Արաք» պարբերաթերթի խմբագրատուն և այնտեղ քննարկեցին տարբեր հարցեր և ունեցան երկողմանի հարցազրույցներ՝ «Արաք» պարբերաթերթի, «Ազատ Արցախ» օրաթերթի և «Յայկի Սերունդ» երիտասարդական պարբերաթերթի համար:




Իրան-Յայաստան բարեկամության ընկերության պատասխանատուները և սոցիալական ու հաղորդակցության ֆրակցիայի անդամները հանդիպում ունեցան «Յայկի Սերունդ» -ի ղեկավարության հետ, մտերմիկ զրույցով ծանոթանալով միմյանց՝ քննարկվեցին մի շարք հարցեր:

Երկու օրվա այցելության և սկաուտական աշխատանքների ուսուցման համար հանդիպումներ կազմակերպվեց «Յայկաշեն»-ում:

Թեհրանի «Միասնական համադրող համձնախմբի» անդամները այցելության վերջին օրվա երեկոյան հյուրնեկալեցին հյուրերին՝ կազմակերպելով ընթրիքի երեկո ՀՍՍ «Շաֆֆի» համալիրի բացոյա սրահում:

ՄԱՐԿՈՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ



Իրանի գեղարվեստասերների շրջանում արդեն հյուտնի նկարիչ էր Մարկոս Գրիգորյանը (ծնվել է Կոռպուտիկինում, 1930-ին մեկնել Թեհրան), երբ 1950-ին ընդունվեց Յոռմի գեղարվեստի ակադեմիա, ուր շուրջ տասը տարի աշխատեց, ցուցահանդեսներ ունեցավ Յոռմում, Փարիզում, Լոնդոնում: Խոալական շրջանի իրապաշտական գործերին հաջորդեցին նորարտահայտչապաշտական բնույթի աշխատանքներ, մի հանգամանք, որ բնական եւ ինքնատիպ արձագանքն էր պատերազմի ժամր տարիներից հետո Եվրոպայում իշխող արվեստի այն ուղղությունների, որոնց թեման մարդկային տիխորությունը, ճնշվածությունն ու տառապանքն էին: Գրիգորյանը ստեղծեց մեծադիր կտավներ՝ նվիրված ցեղասպանության տառապյալներին ու իր հայրենակիցներին՝ Վանի գաղթականներին: Այդ նշանակալի գործերում ծեւախեղումները (deformation), ինչպես նաև ներկերի խառնուրդի մեջ օգտագործած հողն ու մոխիրը նպատակային են ու ավելի ազդեցիկ են դարձնում պատերների հուզական բովանդակությունը:

Յաջողություն գտած արվեստագետը վերադառնում է Իրան: Այստեղ նա իմնում է «Էսթետիկ» պատկերասրահստուդիոն, իր շուրջն է համախմբում արվեստին կոչված նոր ուժեր (Ե. Այվազյան, Ս. Մելքոնյան, Ռ. Ոսկանյան, իրանցի նկարիչներ), որոնք որդեգրում են ազատ, անկաշկանդ արտահայտվելու ուղին:

1962-ին Ս. Գրիգորյանը հաստատվում է Նյու Յորքում, իմնում է ցարդ գործող Արշիլ Գորկու անունը կրող մի պատկերասրահ: Այն դառնում է նկարչական արվեստի յուրատեսակ կենտրոն:

Ս. Գրիգորյանի ստեղծագործության վերջին շրջանը նվիրված է հողի թեմային՝ իրեւ մարդկային բարձրագույն գործունեության ասպարեզ, իիմք ու գաղափար:

1990-ականների սկզբին, երբ Յայաստանը հոչակվեց անկախ պետություն, Գրիգորյան իր եւ դստեր՝ Սաբրինայի ուժերով հավաքած արվեստի ու արհեստի հնագույն նմուշների հարուստ հավաքածուն փոխադրեց Երեւան, որտեղ, Զարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում, տեղադրվեց նրա «Միջին

Արեւելքի» թանգարան-հավաքածուն: Քիչ ավելի ուշ Շկարիչը Գառնիում հիմնեց իր երկրորդ պատկերասրահ-ստուդիան, նպատակ ունենալով տարբեր երկրներից հրավիրված արվեստագետներին «պարգևելու» անձանոր ու անօրինակ մի «ներկապանակ», որպիսին Յայաստանի բնաշխարհն է:

Յայաստան

ԼՂՀ ՆՈՐԾԵՏԻՐ ՆԱԽԱԳԱՌԻ ՊԱՇՏՈՆԱՍՈՒՏԸ ԿԱՅԱՑՎԱԿ

Յամածայն
ԼՂՀ
սահմանադր
ւրան 67-րդ
հոդվածի,
Երեկ Ազգային
ժողովի
հասուկ
նիստուն
տեղի
ունեցավ
համբակական
քայլական
նորունտիր նախագահ
պաշտոնամուտի արարողությունը, ոչ թե խորհրդարանի
նիստերի դահլիճում, այլ Ստեփանակերտի կայազորային
սպայի տանը:

Աժ հատուկ նիստը վարում էր խորհրդարանի նախագահ Աշոտ Ղուլյանը:

Պաշտոնամուտի միջոցառմանը մասնակցում էր ՀՀ նախագահ Անդրեյ Քոչարյանը: Ներկայացել էն նաև հարյուրից ավելի հյուրեր աշխարհի տարբեր երկրներից, որոնց թվում՝ հովհաննելի 19-ի նախագահական ընտրություններին մասնակցած դիտորդներ:

Բակո Սահակյանը նախագահական երրում տվեց ծեռքը 17-րդ դարի ավետարանի եւ ԼՂՀ սահմանադրության վրա դրած: Այնուհետեւ արդեն նոր կարգավիճակում ելույթ ունենալով՝ նախագահը խոստացավ իր ուժն ու գիտելիքներն անմնացորդ ծառայեցնել ժողովրդին: Ծնորհակալաբար արտահայտվելով բոլոր ընտրողների մասին, անկախ նրանից, թե նախագահական ընտրություններում ինչ կողմնորոշում են ունեցել, նա առանձնակի շնորհակալություն հայտնեց ԼՂՀ առաջին նախագահ, ՀՀ նախագահ Անդրեյ Քոչարյանին եւ պաշտոնավարությունն այդ օրվանից ավարտած Արկադի Դուկասյանին՝ Լեռնային Դարձարադի Դամբապետության պետական կայացման գործում ունեցած անուրանալի վաստակի համար:

Անդրադառնալով՝ դարձարադի կարգավորման հեռանկարներին, Բակո Սահակյանը նշեց, որ այդ գործնքացում բանակցություններն այլընտրանք չունեն: Դամբապետության նոր նախագահին օրինանքի խոսք հեց Յայ առաքելական եկեղեցու արցախյան թեմի առաջնորդ Պարգև արք. Մարտիրոսյանը:



Պաշտոնամուտի արարողությունն ուղիղ եթերում հեռարձակվում էր Արցախի հանրային հեռուստատեսությամբ:

Դահլիճում չտեղավորվելու պատճառաբանությամբ՝ լրագրողները հիմնականում ստիպված էին արարողությանը հետեւել դրսից, հեռուստաէկրանի միջոցով: Մուտքը դահլիճ թույլատրված էր սահմանափակ թվով 215 ներկայացուցիչների: Թերեւս նաև նոյն պատճառաբանությամբ սահմանափակված էր 173-ում գործող հասարակական կառույցների ներկայացուցիչների մասնակցությունը:

Երեկոյան մայրաքաղաքի Վերածննդի հրապարակում տեղի ունեցավ համերգ, որին մասնակցում էին նաև Երեւանից ժամանած երգիչներ:

ՂԱՐԱԲԱՆ ՈՒՆԻ ՆՈՐ ՎԱՐՉԱՊԵՏ

Արա Շարությունյանը ընտրվել է ԼՂՀ

Վարչապետ

Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Ազգային ժողովն արտահենք լիազումար նիստում հավանություն է տվել ԼՂՀ վարչապետի պաշտոնում Արայիկ Ջարությունյանի թեկնածությանը: Արա Ջարությունյանի թեկնածությանը հավանություն են տվել 33 պատգամավորներից 32-ը: «ՀՅԴ-Շարժում 88» խմբակցության անդամ Գեղամ Բաղդասարյանը չի մասնակցել նիստին:

Քվեարկությունից հետո Արա Շարությունյանը հայտարարել է, որ նշանակումից հետո կիրամարվի «Ազար Յայրենիք» կուսակցության նախագահի պաշտոնից եւ պատգամավորական մանդատից:

Յիշեցնենք, որ սեպտեմբերի 10-ին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը նամակ էր ուղարկել խորհրդարան, որում, ԼՂՀ Սահմանադրության համապատասխան հոդվածի համաձայն, հանրապետության օրենսդիր մարմնի հավանությանն էր ներկայացրել պատգամավոր, «Ազար Յայրենիք» կուսակցության նախագահ Արայիկ Ջարությունյանի թեկնածությունը:

ՀՅԴ- ընդում Սերժ Սարգսյանի

Յայաստանյան մամուլից տեղեկանում ենք («Առավոտ» և «Ազգ» օրաթերթեր), որ առաջիկա ՀՀ նախագահական ընտրություններում ՀՅԴ-ն մասնակցում է իր սեփական թեկնածուով: Այս շրջանի ընտրություններում, բացի դաշնակցության թեկնածուից հիմնականում կարծես լինելու են երկու թեկնածուներ՝ Սերժ Սարգսյանը, որպես «Դամբապետական» կուսակցությունից, որը հովանավորվելու է ուրիշ շատ կուսակցությունների կողմից, և ընդդիմադիր կուսակցությունների թեկնածուն կամ թեկնածուները:

Դաշնակցությունը շատ հարցերում դնմ է եղել և հակասությունների մեջ է գտնվել Սերժ Սարգսյանի հետ, սա մինչ այժմ դիվանագիտական խաղերի բերումով ծածուկ էր կամ ոչ մի կողմը չէր ուզում արտահայտվել, սակայն արդեն, ըստ դաշնակցության, նրանք պայմանավորվել էին միայն Որբերտ Քոչարյանին

հովանավորել և հիմա կարծում են, որ ամեն գնով պետք է ձգտեն իշխանությանը և չեն հավանում ժողովրդի կողմից բարձր գնահատանքի արժանացած և անգամներ իր հզորությունը ցույց տված Սերժ Սարգսյանին:

Դաշնակցությունը գտնում է, որ ինքը երկրի հարցերը լավ լուծելու համար հատուկ եղանակներ է ունեցել, սակայն դրանք չեն ներկայացրել կամ չի ստացվել, որ ներկայացվի և հարցեր լուծել (Ինչպես հանգույցյալ դաշնակցական Սարուխյանն էր ասում.-«10 օր Դայաստանը տվեք ինձ, բոլոր հարցերը կլուծեմ»):

Դիմա դաշնակցությունը անհանգիստ է, թե ինչ է լինելու իր նախարարների պաշտոնների հարցը, քանի որ համաձայնության հիմն վրա է այդ նախարարությունները հանձնվել իրենց:

Որպես նախագահների թեկնածուներ և անհատներ անհամենատելի են Սերժ Սարգսյանն ու Արմեն Ռոստամյանը: Ով որ մտահոգված լինի Դայաստանի ապագայով կնկատի, որ Սերժ Սարգսյանը իր տարիների փորձն ունի շատ բնագավառներում և նույնիսկ Ռոբերտ Քոչարյանի նախագահության ընթացքում շատ հարցերի լուծում տվողն ու ուղղություն ցույց տվողը նա է եղել: Պեսը է սպասել և հետևել քաղաքական անցուդարձերին Դայաստանում: Արդյոք դաշնակցությունը իր 100 ամյա սիյուռքի փորձով Դայաստանում կարող է, ըստ իրեն, լինի և իշխանամերձ և ընդդիմություն: Զգիտենք գիտականորեն այս տեսությունը որտեղից է գալիս և աշխարհի փորձն այդ մասին ինչպիսին է և իմ դասեր կարելի է քաղել դրանից, բայց վստահ ենք, որ դաշնակցությունը այդ ուսումնասիրությունը կատարած կլինի և գիտի:

Մրամ Դակորյան

Հասարակական

**Հարցագրույց ազգային –
հասարակական գործիչ
պրն. Տիգրան Խաչիկյանի հետ**



Նախ թույլ տվեք շնորհակալություն հայտնել Ձեզ, որ մասնակցեցիք մեր հարցագրույցին: Այս հարցագրույցների շարանով «Լուս» ամսագիրը նպատակ ունի հասարակությանը ծանոթացնել մեր

ազգային և հասարակական գործիչների տեսակետները համայնքի տարբեր հարցերի շուրջ:

Խնդրում ենք ներկայանալ:

Տիգրան Խաչիկյանն են, ծնվել են 1937 թ.-ին Գափլա շրջանի Գուրջի գյուղում: 1946 թ. ընտանիքով տեղափոխվել ենք Քեազագի շրջանի Ազնա գյուղ, որտեղ ստացել են նախնական կրթությունս, ապա ուսումն շարունակել են Շազանի շաբարի գործարանի պետական դպրոցում: 1956 թվականին փոխադրվել ենք Թեհրան, որտեղ անցել են աշխատանքի, իսկ ուսումն շարունակել են շինարարական հատուկ երեկոյան դասընթացներին մասնակցելով: Դեռ գյուղում եղած ժամանակաշրջանից մեր ընտանիքում ավանդություն էր դարձել ազգային աշխատանքներին մասնակցելը: Թեհրան հաստատվելով շարունակվեց այդ ավանդույթը: Այդ ժամանակ ազգային և հասարակական գործիչ՝ ժողովագործականի ջանքերի շնորհիվ հիմնադրվեց «Սասուն» միությունը, որին մասնակցում էի նաև ես: 1963 թվականին «Ալիք» հաստատության հովանավորության ներքո մեր քաղաքանախ մի խումբ ազգայինների ջանքերի շնորհիվ հիմնադրվեց ՀՍՍ «Սիհան» միությունը, որի անդամներիկ վարչության կազմում էի և մինչ այսօր անդամակցում և աշխատում են այդ միությունում: Այս երկար տարիներին մասնակցել են ազգային տարբեր աշխատանքներին՝ շուրջ 6 տարի եղել են 10-րդ Պատգամավորական ժողովի անդամ, ավելի քան 6 տարի եղել են կարիքավորներին օժանդակող մարմնի ատենապետը, արդեն 5 տարի է, որ մասնակցում են ՀՍՍ «Արարատ» կազմակերպության երեցների միության աշխատանքներին և այս տարի ընտրվել են նեկավար կազմի անդամ:

Ինչպե՞ս եք գնահատում կարիքավորներին օժանդակող մարմնի աշխատանքները, արդյոք կարողանո՞ւմ է ծառայել այն նպատակին, որ դուք հետապնդում էք:

Իհարկե ես մանրամասնորեն տեղյակ չեմ, բայց քանի որ կարիքավորներին ճանաչում եմ, գիտեմ որ օգնությունը այնքան չի, որ կարողանան նվազագույն ապրուստը դասավորեն և մենք պետք է աշխատենք, որ այս օգնությունները շատանան, նախկինում ժողովրդի կողմից էլ շատ նվիրատվություններ էին լինում, բայց հիմա ժողովուրդը կարծում են կյանքի դժավար պայմանների պատճառով չի կարողանում օգնել ու մի քիչ էլ անտարբեր է գտնվում այս հարցերի շուրջ :

Քանի որ 10-րդ պատգամավորական ժողովի անդամ եք եղել և այն ժամանակ շատ դժվարություններ եք ունեցել, հիմա ինչպե՞ս եք գնահատում պատգամավորական ժողովի աշխատանքները:

Դիմա էլ շատ աշխատանքներ են տարվում և շատ ժամ է տրամադրվում, բայց տարած աշխատանքի համեմատ շատ քիչ փոխանցում է լինում ժողովրդին,

Հոգս Ամսագիր

կան նաև թերություններ, որոնք պիտի հաղթահարվեն: Պատգամավորական ժողովը ընտրվում է ժողովորի կողմից և պատասխանատու է ժողովրդին, ուստի եթե խնդիրներն ավելի մանրանասորեն փոխանցվի ժողովրդին թերությունները ավելի հեշտ կվերանան և եղած դժվարություններն էլ լուծում կստանան:

Ինչպես գիտենք մամուլին իրավունք չի տրվում մասնակցել ՊԺ-ի նիստերին, քանի որ նման մի օրենք գոյություն չունի: Զեր կարծիքով ինչո՞ւ դիվանը իրավունք չի տալիս, որ մամուլը մասնակցի ՊԺ-ի նիստերին:

Իմ կարծիքով պետք է, որ ՊԺ-ի նիստերը բափանցիկ լինի և չեմ կարծում որևէ հասուլ հարց լինի, որ չպետք է արտացոլվի և կարծում եմ բոլոր մամուլներն էլ պետք է իրավունք ունենան մասնակցելու այդ ժողովներին, քանի որ հիմա մեր ժողովուրդը, ցավոք շատ անտարբեր է, և, եթե մենք աշխատենք նրանց ավելի տեղյակ պահել, նրանք էլ մեզ հետ ավելի լավ կը համագործակցեն:

Քանի որ «Սիփան» միջության հիմնադիրներից եք եղել և Սասուն թաղամասում եք ապրում, ինչո՞ւ եք մասնակցում «Արարատ» կազմակերպության երեցների բաժանմունքի աշխատանքներին:

«Սիփան» միջությունը հիմա շինարարության պատճառով համարյա չի աշխատում և ցավով եմ ասում որ հիմա այն աշխուժությունը, որ «Արարատ» մարզավանում կա, «Սիփանում»՝ չկա: Ես «Սիփան» միջությունը շատ եմ սիրում, բայց, քանի որ չեմ կարող շինարարության գործերով գրաղվել, իմ ազատ ժամերը լրացնելու համար գնում եմ «Արարատ» մարզավան:

Դիմա այսպիսի տարանջատում կա՝ քույր միջություններ և ոչ քույր միջություններ: Մի մոտեցում գոյություն ունի, որ ազգային առաջնորդարանը քույր միջություններին պետք է սերվիս տա, իսկ ոչ քույր միջություններին, որովհետև ինքնուրույն են, չպետք է սերվիս տա: Զեր կարծիքը ի՞նչ է այս կապակցությամբ:

Գիտեմ, որ այդպիսի մոտեցում կա, բայց մանրանան տեղյակ չեմ և կարծում եմ պետք է խորանալ ու տեսնել պատճառներն ինչ են, ինչու պետք է դասել երկու խնդիրի և ես դեմ են այդ մտքին ու, կարծում են, բոլորս պետք է միանանք և մեկ նպատակ ունենանք: Այսինքն եթե ընդունում ենք ազգային առաջնորդարանին և աշխատում ենք նրա հովանավորության ներքո, չեն կարծում, որ խնդիր առաջանա, օրինակ «Սիփան», «Արարատ» և «Փերիո» միջություններին, որոնց ես անդամակցում եմ նման խնդիրներ չկան:

Ի՞նչ հրատապ հարցեր եք տեսնում Սասուն թաղամասում:

Սասուն թաղամասի հրատապ խնդիրները մոլիճների և կարիքավողների հարցն է: Նաև տարեցների ու երեցների համար պետք է մտածենք և մի ակումբ տրամադրվի նրանց, որպեսզի հավաքվեն և իրենց ազատ ժամերը այդտեղ անցկացնեն ու նրանց համար ազգային խնդիրների մասին բացատրություններ տրվի և այլն:

Ի՞նչ կարծիք ունեք ազգային իշխանության կուսակցականացման հարցի շուրջ:

Ընդհանրապես տարբեր երկրներում, եթե որևէ կուսակցություն խորհրդարանի մեջ կամ նախարարների մեջ մեծամասնություն է կազմում, այդ կուսակցության ճաշակը այդ երկրում գործադրվում է և դա շատ բնական է, այստեղ էլ նույնն է: Իմ կարծիքով կարևոր այն է, որ ժողովրդավարությունը պահպի:

Ի՞նչ է ձեր կարծիքը իրանահայ մամուլի անցյալի և ներկա վիճակի մասին:

Անցյալում շատ քիչ թերթեր ենք ունեցել և հիմա էլ, ես կարծում եմ, ինչքան շատ թերթ ունենանք՝ այնքան մեր համայնքը կարծեքավորվի և ամեն թերթի բացումը, ինչ հոսանքի էլ, որ պատկանի, մեզ համար ուրախալի է:

Եթե հասուլ խոսք ունեք մեր համայնքի մասին, խնդրեմ, ներկայացնեք:

Ես կարծում եմ տարբեր սեմինարներ որպի մասնագետ մարդկանց կողմից ժողովրդի արտասահման մեկնելու մասին:

Դարցազրույցը վարեց Հուսիմն Սաֆարյանը

ՈՎԵՐ ԵՆ ՇԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Մամուլում, զանգուածային լրատուական միջոցներով սփոռուած հաղորդումներում, բարձրաստիճան հոգեւորականների քարոզներում, հայ ու օտար պետական բարձր եւ պատասխանատու պաշտօններ գրադարձնող այրերի, Յայց ցեղասպանութիւնը դատապարտող գրաւոր կամ բանաւոր յայտարարութիւններում հաճախ կարելի է հանդիպել երիտրուրեթեր եւ օսմանցիներ բառեզրերին եւ կամ օսմանեան թուրքեր բառակապակցութեանը, ովքեր մեղադրում են Յայց ցեղասպանութեան իրականացման գործում: Իսկ Յայց ցեղասպանութեան իրականացման պատասխանատու երկիր յիշատակուու է ոչ թէ Թուրքիան, այլ Օսմանեան Թուրքիան կամ Օսմանեան կայսրութիւնը: Ալկամայ հարց է առաջանում. արդեօք կարելի՝ է տարանջատել երիտրուրեթին ողջ թուրք ազգից եւ Օսմանեան Թուրքիան ներկայիս Յանրապետական Թուրքիայից:

Հոյս Ամսագիր

Իսրայէլի ակադեմիականների շրջանակում եւ, առհասարակ, ողջ իրեայ ժողովորի մօտ ընդունուած է տարանջատել նացիստներին ողջ գերմանացի ազգից եւ հրեական Յոլոքոսի պատասխանատու նկատել միայն նացիստներին եւ ոչ ողջ գերմանացի ազգին: Այս դասողութեան հիմքում ընկած է թերեւս այն փաստը, որ, իրօք, գերմանացիների մեջ մասը ոչ միայն անմիջական մասնակցութիւն չի ունեցել Յոլոքոսի իրականացման գործում, այլեւ նրանք նույնիսկ տեղեակ չեն եղել, որ իրենց կողքին մի ողջ ազգ է ոչնչացում: Այս առումով, արդարացի է եւ տրամարանական հրեական Յոլոքոսի պատասխանատու նկատել միայն նացիստներին: Սակայն հ՞նչն է պատճառը, որ թոյլ չի տալիս Հայոց ցեղասպանութեան իրականացման պատասխանատու նկատել միայն երիտրութերին, այլ ոչ ողջ թուրք ազգին:

Անարարկելի փաստ է, որ Հայոց ցեղասպանութեան եւ հրեական Յոլոքոսի միջեւ առկայ են բազմաթիւ նմանութիւններ, այդուհանդերձ, դրանցից իրաքանչիւրն ունի իր իրայատկութիւնները, որոնք եւ արգելում են հայ ժողովրդին, հետեւելով իրեաների օրինակին, միայն երիտրութերին ընդունել Հայոց ցեղասպանութեան պատասխանատու եւ ոչ ողջ թուրք ազգին: Որո՞նք են Հայոց ցեղասպանութեան այդ իրայատկութիւնները: Թուարկենք դրանցից ընդամենը մի քանիսը:

Ի տարբերութիւն Հայոց ցեղասպանութեան, հրեական Յոլոքոսի պատճառներից մեկը նրանց ոչ արիական ազգ լինելու փաստն էր: Ըստ այս դասողութեան՝ ոչ արիական ազգերին յարիր է անբարոյական կենսակերպ, ցածր արժեհամակարգ, քաղաքակրութեանը անյարիր նորմեր եւ այլն: Աւելին, հրեաները Եւրոպայում միշտ նկատուել են պոտենցիալ մեծ վտանգ Ֆինանսական եւ տնտեսական բնագաւառներում: Անժխտելի է նաեւ այն փաստը, թէ, իրօք, հրեական Յոլոքոսը իրականացուել է Գերմանիայի օրուայ զինուորական հրամանատարութեան կողմից եւ ոչ թէ ողջ գերմանացի ազգի կողմից: Յաւելենք նաեւ, որ հրեական Յոլոքոսը տեղի չի ունեցել իրենց հայրենի հողում: Մինչդեռ Հայոց ցեղասպանութիւնը իրականացուել է հայ ժողովրդի պատմական հայրենիքում, որտեղ ձեւաւորուել է ու զարգացել է հայ ազգը, որտեղ հայ ժողովուրդը ստեղծել է համանարդկային արժեք ներկայացնող քաղաքակրութիւն եւ իրոյն մշակոյք: Հայոց ցեղասպանութիւնը զաղափարախօսութեան արգասիք չէր, այլ պարզապես Ցեղասպանութիւնը իրագործելով թուրքը խեղիք եւ վիճեցրեց մի հիմաւորց ժողովրդի արդար իրաւունքը՝ իր հսկ հայրենիքում ապահով ապրելու իրավունքը: Հայոց ցեղասպանութիւնը իրականացուեց թուրք ազգի մի ստուար զանգուածի մասնակցութեամբ եւ վարձու ու թուրքական կեղծ խոստումներին հաւատացած թուրք ժողովրդի համագործակցութեամբ: Իսկ թուրքերի այն չնչին տոկոսը, որն անմիջական մասնակցութիւն չի ունեցել Ցեղասպանութեան իրականացման գործում, ապա, նրանք անկասկած օգտուել են Ցեղասպանութեան հետեւանքներից՝ բռնագրաւելով եւ տիրանալով հայ ժողովրդի ունեցուածքին, գոյքին ու հարստութեանը:

Նշենք նաեւ, որ ի տարբերութիւն հրեական Յոլոքոսի, Հայոց ցեղասպանութիւնը դեռևս չի ճանաչուել ու դատապարտուել այն իրականացնողի կողմից: Աւելին, թուրքերը ոչ միայն ուրանում են Հայոց

ցեղասպանութիւնը, այլեւ անամօթաբար խեղարիւրելով պատմական ծշմարտութիւնը, աշխարհին ներկայանում են ոչ թէ իբրեւ ցեղասպան ազգ, այլ հայերի կողմից ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդ, իբրեւ զոհ: Ուրացմանը համատեղ, ցեղասպանութեանը յաջորդած 92 տարիների ընթացքում թուրքերը կանոնաւոր կերպով իրականացնում են հայկական մշակութային ցեղասպանութիւն՝ ոչնչացնելով թուրքիայում հայ ժողովրդի պատմութեանը, մշակոյթին ու կրօնին պատկանող հազարամեայ հետքերը, հայկական վանքերն ու եկեղեցիները: Սակայն աւելի մտահոգիչ է այն փաստը, որ այսօր էլ, իր զոհի վրայ յարձակուելու եւ յօշոտելու պատրաստ գիշատիչի պէս, թուրքիան յարմար առիթի է սպասում իր «կիսատ թողած գործը» աւարտին հասցնելու համար: Ասուածիս ապացոյց կարող են լինել Ցեղասպանութեանը յաջորդած տարիների ընթացքում Հայաստանի առաջին հանրապետութիւնը գրաւելու եւ բնաջնջելու նպատակով դէպի մեր երկիր իրար յաջորդած թուրքական մի քանի զինուորական արշաւանքները, երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Խորհրդային Հայաստանի սահմանի երկայնքով Հայաստանի բնաջնջման նպատակով կենտրոնացած թուրքական 13 դիվիզիաները, նոյն ժամանակաշրջանում թուրքիայի երգուում նահանգում ծննանը ճանապարհներ շինելու պատրուակով զինուորագրուած ու ցրտից մահացած 37.000 պոլսահայերը, 1992-ին Հայաստանի արեւմտեան սահմանին կուտակուած եւ Հայաստանի վրայ յարձակման պատրաստ թուրքական զօրքերը ու բոլորովին վերջերս երիտասարդ թուրք ազգայնանոլի դաւադիր գմդակից սպասուած Հրաման Դինքը: Այս բոլորը փաստում են, որ մեր օրերի թուրքը ոչնչով չի տարբերուում հարիւր տարի առաջուայ օսմանցուց, եւ քեմալիստական-հանրապետական թուրքիան՝ Օսմանեան թուրքիայից: Իսկ եթէ անմշան տարբերութիւններ էլ կան, ապա դրանք չեն վերաբերում Հայոց հարցին: Մինչդեռ Գերմանիան ոչ միայն չի ուրանում հրեական Յոլոքոսը, այլ, դեռ 1952 թուականին, ընդունելով իր կատարած ոճիրը, ներողութիւն է խնդրել հրեայ ժողովրդից եւ վճարել արածի ծանր գինը:

Առ այս, հայ ժողովրդի համար անընդունելի է տարանջատել երիտրութերին ողջ թուրք ազգից, որքանով որ դա կը նպաստի նրանց ուրացման քաղաքականութեանը եւ նրան կը հեռացնի իրենց կատարած ցեղասպանութեան հաւաքական պատասխանատութիւնից:

Ի դէպ, որոշ հրեայ պատմաբաններ ու ցեղասպանագէններ եւս սկսել են քննադատել նացիստների տարանջատումը ողջ գերմանացի ազգից եւ ընդունում են, թէ հրեական Յոլոքոսի պատասխանատուն ողջ գերմանացի ազգն է: Նրանք, միաժամանակ, կոչ են անում իրենց կոլեգաներին՝ վերանայել այս հարցը եւ փոխել իրենց աւանդական դիրքորոշումը հարցի վերաբերեալ:

ԿՈՐԻՒՆ ԱՐԴ. ԲԱՂԴԱՍԱՐԵՍՆ, Անդամ՝ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միարանութեան

Մարդական

Հարցագրույց իրանահայ միջազգային մրցավար Վրեժ Աբգարյանի հետ

1- Խնդրեմ ներկայացնեք Ձեզ:

Վրեժ Աբգարյանն եմ՝ միջազգային կարգի մրցավար, մասնակցել եմ հինգերորդ համահայկական խաղերին, որը կայանում էր Երևանում: Պետք է պարզաբեր ասեմ, որ խաղերի վարելը դեպի լավը գնաց և այս տարի, բացի մեկ խաղ, որ Երևանի տղաները իրենք խնդիր ստեղծեցին, բոլոր մարզերից ու քաղաքներից եկած մարզիկները որևէ հարց չստեղծեցին և խաղերը լավ ու կանոնավոր կայացան, ավարտական խաղն էլ շատ հաջող ընթացավ: Բախտ ունեի 4-րդ ֆինալի խաղը դատելու:

2- Ինչպե՞ս տեսաք այս տարվա ՀՀ 4-րդ շրջանի խաղերը և ինչպես ե՞ք գնահատեմ սույն խաղերը:

Թէ քանակով և թէ որակով մտածում էինք, որ այս խաղերը պետք է գույնը ձեռքից տար, բայց ճիշտ հակառակը ստացվեց, բոլոր համայնքները ավելի նախապատրաստված էին Երևում, խմբերը ամսներ փորձ էին արել միասին և պատրաստված էին եկել: Մենք ականատես էինք՝ 4 ամիս առաջ Իրանի մեր բոլոր խմբերը փորձերը սկսել էին, հանձնախմբերը իրենց աշխատանքները ունեցել էին և ընտրություններ էին կատարվել Թեհրանում, Զուլայյում, Թավիդում: Հայաստանի տարբեր ֆեդերացիաները փորձում են սփյուռքից ընտրեն խաղացողներ հայաստանի հավաքականի հանար, արդեն ընտրել են մի քանի



խաղացողներ բասկետբոլի կապակցութեամբ: «Բաֆֆի» ՍՍ համալիրի բասկետբոլիստ Հրաչ Թահմասյանին քանի մարզիկներ արդեն հրավիրել են Հայաստանի հավաքականի հանար՝ Եվրոպայի մրցություններին խաղալու նպատակով:

3-Ինչպե՞ս էր խաղերի կազմակերպվածությունը:

Վերջապես խոսում ենք Հայաստանի մասին, ամեն կազմակերպիչի հանար իր նյութական կարողությունը շատ կարող է լավ հնարավորություններ ստեղծել: Քանի որ նյութական դժվարություններ կա, որոշ սրահներ հարմարության տեսակետից հարմար չեն:

4-Քանի՞ խմբեր էին մասնակցել բասկետբոլի մարզական և ո՞ր երկրներից:

Տղայց բաժնում մասնակցում էին 21 քաղաքից և օրինորդաց բաժնից 11 խումբ: Եզրափակիչ փուլ հասան

Սույն՝ Ռուսաստանից և Գլենդելը՝ Ամերիկաից: Իրանից մասնակցել էին Թեհրանը, Զուլայյ և Թավիդը: Հայաստանից մասնակցել էին Գյումրին և Երևանը: Ղարաբաղից Ստեփանակերտը: Ամերիկաից 3 քաղաքներ և Գլենդելը առանձին էր մասնակցել: Կայրոյից Եկել էր մի խումբ, Ստանբուլից, Լիբանանից, Վիեննայից, Սիդնեյից, Վրաստանից և Հալեբից մեկական խմբեր:

5-Ո՞ր թիմերն էին ամենափայլունը խաղերի մեջ:

Երևանի օրինորդաց խումբը:

6-Չեր կարծիքը Իրանի մարզիկ-ուկիների մասին: Որպես մասնագետ կարող եմ ասել, որ խումբը անցեալ շրջանների համենատ ավելի լավ էր, բայց ուրիշ մարզերն, քաղաքներն ու երկրներն ավելի պատրաստված էին, քան մենք: Երբ մենք մարզիկներին տանում ենք համահայկական խաղերին, ասում ենք՝ միայն խաղերի համար չենք գնում, ասում ենք՝ գնում ենք հայաստան, իտու մասնակցելու համահայկական խաղերին: Այստեղ տարբերությունը կա, բայց մենք էլ պիտի մի քիչ արդար նայենք մեր երեխաների ընտրելու գործին: Եթե հայաստան են գնում, միայն մարզանքի համար չէ, այլ նաև ազգային դաստիարակություն ենք հետապնդում

7-Ո՞ր մարզիկ կամ մարզիկուիկները եղան այս տարվա լավագույնը:

Խաղերը միևնույն ժամանակ երեք տեղ էին կատարվում և դատելը և ընտրություն կատարելու դժվար էր:

8-Խաղերի արդյունքը:

Օր. բաժնում. 1-Երևան, 2-Գլենդել, 3-Թեհրան, 4-Ստեփանակերտ

Տղ. բաժնում. 1-Սոչի, 2-Գլենդել, 3-Սիդնեյ, 4-Վիեննա

9-Մի հետաքրքիր հուշ պատմեք այս խաղերի ընթացքից: Սիդնիի տղաները, առաջին անգամ մասնակցելով շատ լավ ներկայացան և նրանց մոտեցումը մյուս խաղացողներից տարբեր էր: Նրանք ընդհանարապես շատ բարեկանասեր էին: Նույնիսկ ինձ հրավիրեցին աշխատել իրենց քաղաքում:

10-Աւում են բնակավայրի և ընդհանուր սերվիս տալու գործում խտրականություն է եղել Իրանի մարզիկների նկատմանը. ի՞նչ է Չեր կարծիքը:

Ով ասել է, մի քիչ անարդար է մոտեցել, մարդու իր դրամի հավասար սերվիս կտան: Յուրաքանչյուր արժեքը տարբեր էր: Մեր բասկետբոլի, շախմատի, թեթև ատլետիկայի և թենիսի երեխաների հյուրանոցը հարմար էր: Սկզբից մահճակալների խնդիր ունեինք, որ վերացվեց: Ամեն րոպէ էլ մեքենա կար երթևեկության համար

11-Ի՞նչ թերութիւններ ուներ մեր համայնքի կազմակերպիչ համաձախումբը, նրա բաց բողոքմները:

Նախ գնահատում եմ բոլոր նրանց, ովքեր եկել էին այս խաղերին՝ որպես հանձնախմբի անդամ կամ ենթահանձնախմբի, ես գնահատում եմ նրանց աշխատանքը: Մեր թերությունը այն է, որ յուրաքանչյուր տարի նոր հանձնախումբ ենք կյանքի կոչում: Մենք պետք է օգտվենք նախկին մասնակից անձնավորություններից որպես հանձնախմբի անդամներ:

12-Չեր կարծիքը «Լոյս» ամսաթերթի մասին:

Ստանում և կարդում ենք, մասնավանդ այդ պարսկերեն երկու էջը որոշ տեղեկություններ կարող է տալ մեր պարսկի գործակիցներին: Նրանք թերթը ընթերցելով մեր հայկական խնդիրներին էլ ծանոթանում են:

Հարցագրույցը վարեց Նարին Նաջարյանը

Մշակութային

Հրայա Աճառյանը Պարսկաստանում

Իր «Կյանքիս հուշերից» Գրքից

Մի անգամ 700 հայ կամավորների մի խումբ, դինված իրենց հրացաններով, իրենց հետ վերցրած պղնձի ահռելի քանակությամբ պաշար, Պետրովսկից եկան Էնգելի Գերասիմ Բալա յանի առաջնորդությամբ և ուզում էին մտնել անգլիական բանակի մեջ: Անգլիացիք ոչ միայն մերժեցին նրանց, այլև շրողեցին քաղաքի



Հր. Աճառյանը 1909 թվականին

իրեար տեսնել, և ստիպեցին առանց պաշար իսկ վերցնելու չեղանալ էնգելիից:

Այս բոլոր անտեղի խստությունները շատ վատ ազդեցին հայոց վրա. արդեն Բաքվի դեպքերից հետո, եթե անգլիացիք չուղեցին պաշտպանել քաղաքը և առաջին անգամ թռողներ հեռանալու պատ բասություն տեսան, շատ վատ կարծիք էր կազմված հայոց մեջ նրանց մասին: Էնգելիի մեջ նրանց վերաբերմունքը եկավ պակասը լրացնելով և բոլորը համարում էին նրանց կրաքիս ու վայրենի:

Մինչեւ այսպես մի կերպ ապրում էին էնգելիում, սկսեցին գալ Բաքվից թուրքերի գազանությանց լուրերը, հայերը դիմադրել լն մինչև երկուշաբթի օրը. քաղաքի փողոցների մեջ անգամ կատաղի կրիվ է տեղի ունեցել, վերջապես տաճիկները մտել են և երեք օր կոտորած են սարքել, կոտորվել են մինչև 30 000 հայ, ո- բոնց մեջ նաև սակավաթիվ ոռուսներ, մասցար խնայվել է. պղծը- վել են բազմաթիվ հայ կանայք ու աղջկներ. կողոպատվել են հայոց բոլոր տները, Ստանիսլավսկով փողոցը, որ հայկական թաղն Հր, ամբողջ ապես այրվել է: Բայց այս բոլորը ստուգելու և հաստատելու համար միջոցներ չկային: Հետո լուրերն ավելի վատացան, տաճիկներն իրք թե առաջանում էին Պետրովսկի վրա, տեղական հայերը վտանգի մեջ են: Սրան հաջորդեցին դաշնակիցների տարած հաղթության ավետիսը,- Բոլլարիայի անձնապալյութու- նը, Թուրքիայի անկումը, Ավստրիայի զինաթափումը, Գերմանիայի հաշտություն խնդրելը Վիլսոնի միջոցով, և հանկարծ, դրանց հակառակ, տաճիկները և Քյոլզիկ խանը միացած, երկու կողմից արշավում են էնգելիի վրա, էնգելիի դրությունը վտանգավոր է: Մի գիշեր անգլիացիների կողընելը իր մոտ երավիրեց գաղթականների ներկայացուցիչներին և նրանց պաշտոնապես հայտնեց, թե Գերմանիայի բանը վերջացած է. առաջարկեց այս լուրը հայտարարել բոլորին: Կայծակի արագությամբ տարածվեց ավետիսը, դորանոցներից դուրս

թափվեց ժողովուրդը, և ընդարձակ պարտելի մեջ սկսեցին ուրախությունները, երգում էին, պարում, նվազում և ուրախության բարձրագույն աղաղակներով իրար շնորհավորում:

Այդ օրերում ես Թեհրանից մի հեռագիր ստացա, տեսուչ պարուն Դիլանյանի ստորագրությամբ, որով հայոց մասնավոր դպրոցի ուսուցիչ էի երավիրված: Անմիջապես սկսեցին պատրաստություն տեսնել ճանապարհ ընկնելու:

(Ժարումակություն 4)

ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊՈՂՈՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ
բան. գիտ. դոկտ.

Բ. ԱՌԱՍՊԵԼՍԵՐ (Ժարումակ.)

«Վիպասանք» քաղաքական մեծ տեղաշարժերի վեա է: Երկրի հզորացման իրենց աշխարհաշեն գործունեությամբ են աչքի ընկնում նաեւ Արտաշես Առաջինն ու նրա հետնորդ՝ երկրորդ Արտաշեսը, որն ընդունում է կարգեր ու օրենքներ եւ կատարում բարենորդումներ: Վեպի բովանդակությանը ճնշություն ու գունագեղություն են հաղորդում հայ կյանքի ու կենցաղի տարրեր կողմերը ներկայացնող վիպասանական երգերը, որոնք վերաբերում են այդ վաղ ժամանակներում ժողովրդի կյանքի համար տիպական բարքերին ու սովորույթներին (Ալանների թագավորի դուստր Սաթենիկի խոսքը ուղղված Արտաշես արքային, արքայացման առեւանգումը, հարսանիքը, Սաթենիկի տենչանքը վիշապազուների առաջնորդ Արգավանի նկատմամբ, Արտավազի չար բնավորությունը, նրա դժգոհությունը վախճանված հորից, Արտաշեսի անեծքը, Արտավազի գահավիժումը Մասսի վիհի մեջ եւ այլն): Յակառակ քրիստոնեական ըմբռնման «Վիպասանքում», ինչպես առասպեսներում, ընդգծվում են հերոսների մարմնական կատարելությունը եւ ուժը, նրանց անօրինակ սիրանքներն իբրեւ արդյունք հաղթ բազումների: Նրանք գեղատես են «անձնեայ եւ թիկնաւետ», «գեղեցկուտն, քաջահասաւկ», միաժամանակ նաեւ հոգով գեղեցիկ ու անվախ, իմաստում, պերճախոս, արդարադատ ու շինարար: «Վիպասանքից» խորենացու բառացի վկայակոչած չափածո հատվածներն աչքի են ընկնում նախնյաց գրաբար հայերենի հարստությամբ ու մշակվածությամբ, ճաշակավոր պատկերներով ու համեմատություններով:

Մանուկ Աբեյյանը հայ իին գրականության զարգացման ընթացքը բաժանում է երեք մեծ պարբերաշշանի՝ իրավացիութեն առաջին շրջան համարելով հայ ժողովրդի անգիր ժամանակների ստեղծագործությունը եւ այն բնութագրելով որպես «Նախնական առասպելա և պատմական բանահյուսություն» (հնագույն դարերից մինչեւ Դ.) Յաջորդ ժամանակների գրականությունը, որը համեմատաբար կարծ ժամանակ անց ձեռք է բերել իր լիարժեք դրսեւորման միջոցը՝ գիրը, գիտնականը դիտում է երկու մեծ շրջանով՝ «Եկեղեցա և քաղաքական մաքառման գրականություն» (Գևից մինչեւ Ժ դիրքերը) եւ «Վերածնության գրականություն» (ԺԱ դարից մինչեւ Ժ դարի վերջերը): Այդ պարբերացումը հիմնավորված է եւ յուրաքանչյուր շրջանի համար ճիշտ է արտահայտում գրականության զարգացման գաղափարական միտումներն ու սլաքը, գեղարվեստական առանձնահատկությունները:

(Ժարումակություն 3)